

Տրապիզոնից մինչև Սյուրմենեի հայկական շրջանի կենտրոնական Կաարա գյուղը շուրջ 8-մայր ճանապարհ է, որն անցնում է հետևյալ վայրերով՝ Տրապիզոն—Տրոնա—Յամպուլի գետ, ապա սուրն գետի ձախափնյա արահետով քարձրանում Մաղթելայի կամուրջը, որի արևելյան կողմի արահետներով հասնում է Կատրա Կա նաև ավելի կարճ՝ լեռնային ճանապարհ, որը բաժանվում է Տրոնայի արեւելքում ու Կաարուքսա գյուղի միջով բարձրանում Դուռնայի սարը։ Սարն այս անունն ստացել է ճանապարհի եզրին գտնվող

սառնորակ աղբյուրի մոտ կառուցված զուռնայի (շրավաղանի) շնորհիվ։

Դուռնայի արևելյան լանջերի դեմ-հանդիման տարածված էին Սյուրմենեի հայկական գյուղերը։ Խեթ շավիղն իջնում է Յամպուլի գետը, որի ձախ ափին գտնվում է Մաղթել գյուղը։ Զավզոնա թուրքական գյուղի մոտ. փայտե կամուրջն անցնելով 1,5 ժամից արդեն Կատրան է։ Սյու ուղիով, շուրջ երկու ժամ կրճաավում է Տրապիզոն—Կատրա ճանապարհը։

4. ՄԱՀՄԵՒԱԿԱՆԱՑԱԾ ՀՈՒՑՆԵՐԻ ԳՅՈՒՂՆԵՐԸ

Կրոմ գավառակ։ Նույն տարիներին, երբ Սյուրմենեում ու մոտակա վայրերում հայոց մեծ ռաբաթի էր տարածվել, Դուռնա-օղլին մոլեռանդ սուլթանների ու մի խումբ հնիկների ուղեկցությամբ մտնում է Տրապիզոնի ու Գյումուշխանեի միջև գտնվող, շուրջ 2500 տնից բաղկացած հունական Կրոմ գավառակը։ Սպառնալիքի առկա նրանց ստիպում են մահմեդական դառնալ։ Սյուրմենեի գավառակի հայերին պատահած դեպքերից ահարեկված, կրոմցիք, ժողովրդի ֆիզիկական գոյությունը փրկելու նպատակով, առեղծոք համաձայնվում են ընդունել մահմեդականությունը։ Եկեղեցիները մզկիթ են դարձնում, արտաքուստ կատարում մահմեդական կրոնի կարգը, իսկ հոգով՝ դեանափոր ազդեցության ներքո, տեղում շարունակում հարազատ կրոնական արարողություններն ու ժխտակատարությունները և հաստատ մնում իրենց հավատին։ Մոտ 100 տարի անց՝ XIX դ. սկզբներին, ստեղծված քաղաքական

նպաստավոր պայմանների շնորհիվ, նրանց հաջողվում է ամբողջությամբ վերականգնել իրենց աղջալին ու կրոնական ինքնուրույնությունը։

Խոնյա։ Կրոմի հեա միաժամանակ, հնիկների ու մոլլաների սպառնալիքի տակ, իսլամի կրոնն են ընդունում նաև Պլատանայի հառավային լեռնաշխարհում ապրող շուրջ 1000 տուն՝ Թոնյա գյուղախմբի հույները։ Սակայն սրանք չեն կարողանում հեռանալ Կրոմի օրինակին։ Այդ ժամանակից մնացել էին մահմեդական, թեպետ մինչև մեր օրերը (1915 թ.) պահպանել էին մայրենի լեզուն ու աղջալին բարբերը։

Սֆգիլ։ Ինչպես վերն աավց, Օֆ գավառակի հույները առաջիններից եղան մահմեդական կրոնն ընդունողների մեջ ու այդպես չէ մնացին մինչև վերջ։ Նրանք շրջապատված լինելով թուրք ու լաղ աղաքանակչությամբ, հիմնականում թրքախոս ու շատերը մոլեռանդ մահմեդականներ էին դարձել։

5. ՅՈՄՈՒՐԱՑԻ ՎԻՃԱԿ

Գտնվում է Տրապիզոն քաղաքի հարավ-արեւելքում, Տեղերմեն-աերե (Ջրաղացների դեա) ու Յոմպուլի գետերի միջև ընկած լեռնաշխարհում։ Հյուսիսային սահմանները ողողում է Սե ծովը, արեւելքից սահմանակից է Սյուրմենե, իսկ հարավ-արեւմուտքից՝ Ճենդլուզի վիճակներին։ Հարավից Սինջանի ու Այուրի լեռներով անջատված է Կյումուշխանե գավառի Սանդա հունական գյուղախմբից, հյուսիս-արեւմուտքում Տեղերմեն-աերե դեա է։ Վիճակն ունի իր ներքին երկու դեաերը՝ Կալաֆկան, որը ծով է թափվում դուրախամրի վարչական կենտրոն Տրոնայի մոտ, ու Շանա դեաը, որը ծով է հասնում սոաջինից կես ժամ արեւմուտք, Կովաթա ևյուղով վայրում։ Շանա դեաըն ունի երկու վաակ՝ Կյուշանա և Սամարուքսա, որոնք իրար միանում են ծովափին մոտ 3 կմ ներքև։ Սամարուքսա վտակն իր հերթին ունի երկու էյուղ՝ Ծոշարա ու Մեծ Սամարուքսա։ Կալաֆ-


կա դեան սկիզբ է առնում ծովափից շուրջ 35—40 կմ հեռու գտնվող Սինջանի և Այուրի լեռներից, Կյուշանան՝ Ուղտաղի (ծովից 30 կմ հառակ), Ծոշարան՝ Ջաղրլի, Մեծ Սամարաքսան՝ Ճիկանոյի լեռներից։ Յոմուրայի անտառածածկ գլխավոր լեռներն են (հարավից հյուսիս)։ Կալաֆկա դեաի ընթացքում՝ Սիֆթերը, Կալաֆկան, Շանա դեաի հովտում՝ Ուղ-Տաղին, Արդուլան, Ծոշարան։

Յոմուրայի արևելյան մասում գտնվող հայկական գյուղերը տանող ճանապարհը Տրապիզոն քաղաքից մինչև Տրոնա-Ղովաթա անցնում է Տրապիզոն—Բաթում խճուղով, որին համընցիք անվանում էին Երաթումի ճոմփա։ Այս ալարահաղ թեքվում է դեպի հարավ՝ Տրոնայից Սպիոն—Սիֆթեր, Դովաթայից Սինկիլա—Կյուշանա—Սարալլար—Սֆյանձ, իսկ արևմտյան գյուղերի ճանապարհն անջատվում է Տեղերմեն-աերե

գետի արևելքից գեպի հարավ, անցնելով Զոֆա-
նոդ—Սկաֆիա—Ճոշարա երթուղով:

Վարչական րաժանմամբ Յոմուրայի վիճա-
կին էին ենթարկվում նաև Տեղերմեն-աերե գետի
արևմյան ստրալանջերում գտնվող Զիդակսա,
Նոխածանա և Վերանա գյուղերը, սակայն աշ-
խարհագրական դիրքով ու ազգային ներքին
կյանքով այդ գյուղերը Տրտալիզոնի մերձքաղա-
քային հայկական գյուղերի անբաժան մասն էին,
ուստի նպասակահարմար է գրանց մտաին խոսել
համապատասխան հտտվածում:

Կովաթայի ծովափնյա մասը 6—8 կմ երկա-
րությամբ և 2—3 կմ լայնությամբ ճահճուտներ
են, ճահճատենգի (մտլարիտ) րույն, տեղի ընա-
կիչների պատուհասը: Յոմուրայի միջին, հատկա-
պես լեռնաշառ մասի կլիման խիստ առողջարար
է, ջրերը վճիա ու սառն են:



3. Սարգիս Հալուինի (Ղազարյան, 1838—1908 թթ.)

Յոմուրայի լեռնային գյուղերը XVIII դ. ըս-
կըզրից եղել են այն առաջին հանգրվանները, որ-
տեղ հաստատվեցին Սև-գետի (Սյուրմենեի) գա-
վառակի սարսափներից փախած հայերը՝ բավա-
կան ստվար մի զանգված, որի հիմնական մասը
տասնյակ տարիներ թուրք կալվածատերերի մա-
րաբան* էր: XIX դ. ընթացքում յոմուրացիների

* Մարաթա կամ Բյոչքե—հողազուրկ, վարձակալ գյու-
ղացի, որը զուրկ էր սեփական քարաշեն տուն և, պոհասա-
րակ, տնտեսություն ունենալու իրավունքից և իր ու ընտա-
նիքի ապրուստը հողում էր կալվածատիրոջ հողամասում
չնչին վարձատրությամբ աշխատելով (Մանոթ. խմբագրի):

մեծամասնությունը հանդիմանում էր հողամասեր
գնել, սեփական աներ կառուցել. հաստատուն
տնտեսություն հիմնել. որը խթանեց մշակութա-
յին կյանքի աշխուժացմանը: 1900-ական թվա-
կաններին բացառություն էին փայտաշեն տներում
ապրող ընտանիքները: Նոր կառուցված քարաշեն
աները հների համեմատությամբ խիստ րարե-
փոխված, լուսավոր ու րարեշեն էին: Խոշուկ փա-
տաշեն գպրոցները փութարինվել էին նորածե
քաբակերաներով: Բոլոր եկեղեցիները նույնպես
քարակերտ էին:

Այն հանգամանքը, որ համարյա բոլոր արե-
տեսությունները քիչ թե շատ սեփական հողամա-
սերով ապահովվել էին, հնարավորություն էր ըս-
տեղծել պրադվելու և դարգացնելու գյուղականտե-
սության այնպիսի ճյուղեր, որոնք տեղական պայ-
մաններում ամենանպաստավորն ու շահավետն
էին: Յոմուրայում այդպիսիք կաղնու այգիներն
էին: Յոմուրայի, հատկապես Շանայի կաղինը
ինչպես ներքին, նույնպես և արտաքին շուկայում
մեծ հռչակ էր վայելում: Մ. Վ. Բժշկյանը, որը
1810-ական թվականներին եղել էր այդ վալրե-
րում, հիշատակում է Շանայի անվանի կաղինը:
Բոլոր տնտեսությունները, րացի րարձր լեռնա-
յին լանջերից (ուր կաղնու մշակումը նպաստա-
վոր չէր), իրենց կարիքները ապահովելու սահմա-
նում միայն, նվաղսպույն հողամաս թողնելով
գաշտամշակությանն ու րանջարառուծությանը,
մնացյալը հաակացնում էին կաղնու այգիներին:
Շրջանի գլխավոր հագահատիկը եգիպտացորենն
էր: Եգիպտացորենի նույն հոպամասում միաժա-
մանակ մշակում էին րնտանիքին սահրածեշտ
բանջարանոցային այլ կուլտուրաներ: Որպես երկ-
րորդական, սակայն չափազանց էական ու համա-
տարած դրագմունքներ էին կաթնատնտեսությունը,
հավալրուծությունը, ինչպես նաև մեղվաբուծու-
թյունը: Խոշոր եղջերավոր անասուններից միայն
կով էին պահում: Մեծաքանակ (50—150) ոչխար
պահողները փոքրաթիվ էին, սակայն հաղվազեպ
էին այն ընաանիքները, որոնք մսեղենի ու րրգի
համար 3—10 ոչխար չունենային:

Յոմուրայի 34 գյուղում, եղեռնի նախօրյա-
կին, հայերը հաշվվում էին 714 տուն, 5000 շունչ:
Շրջանի ղուտ հայաբնակ ու հայաշառ գյուղերը
կենտրոնացած էին Շանա ու Կալաֆկա գետերի
հովիտներում: Դրանք էին՝ Կյուշանա, Կալաֆյա-
հայկական, Մենկիրա, Ապիոն, Փոքր-Սամարուքսա
(Սարայլար, Աֆյանձ), Ճոշարա, Սկաֆիա, Կրու-
միլա, Զեֆսոնոլ բնակավայրերը:

Թեև Յոմուրայի առանձին գյուղերում անշուք
վարժաաներ (գպրոցներ) գոյություն են ունեցել
գեոեա 1860-ական թթ. առաջ, սակայն լուսա-

վորութիւնն զործր ակնհայտ վերելք է ստանում մեր պաշտօնական հայրենակից, հետադարձում վաստակավոր բանասեր, երիտասարդ Ս. Հայկունու (Վաղարշյան)՝ ուսուցչական պաշտոնով Շանա (Սարալյար) դուրս գալու օրից (1864 թ.)։ Ժամանակի աղանախի ու առաջադեմ գաղափարներով ուսուցիչական գործչին հաջողվում է համախմբել դուրս առաջադեմ երիտասարդությունը, կարճ ժամանակահատվածում մտնու հիմքերի վրա դնել զընդունուցական դործը։ Պայքարելով ժամանակի խավարամտութիւնն դեմ, նա կարողանում է համոզել ծնողներին, որպիսի աղջիկներին տղաների հետ միասին ուսումնարան ուղարկեն (գաւա ժամանակի համար առաջադեմական քալ էր)։ Բացի դպրոցական հասակի աշուկերութիւնից, անդրազեւ ուսանողների ու երիտասարդների հասարակարկայնութիւնն է երեկոյան դասընթացները։ Ս. Հայկունին նույն դուրսում պաշտօնավարեց 8 տարի (1864—1872 թթ.), վալեւելով ժողովրդի սերն ու հարդանքը։ Նա իր առաջավոր աշակերտների մի խումր ստաշնորդեց Տրապիզոնի աղալին վարժապետի, սրոնք, ալարակով ալն, վերադարձան դուրս ե դարձան իրենց հայրենասեր ուսուցչի արժանի հաջորդները։ Նրանք ոչ միայն անվանի մանկավարժներ դարձան, ալ նաեւ աղատագրական դարձաւորներ տարածողներ ու կաղմակերպիչներ։

Յոմուրայի վիճակի հայկական դուրսն ալսանը կթարկվին արեւելից արեւմուտք։

Էլեմենցը, Վաճաճալեւը և Մաղբեշը Յոմուրայի արեւելում, Յամուրի դեպի երկու ափերին ձգված, ամենահետադարձ հայ դուրսն էին, որոնք թեպետ վարչական անասկեայից ենթարկվում էին Յոմուրայի վիճակին, սակայն աղալին կլանքով Սլուրմենի հայկական համայնքի անբաժան մասն էին։

Ալլիսի գլուղալսումը դանվում է Սինչան լեռան արեւելյան ստորոտում, Յամուրի դեպի երկու ափերին։

Սինչանի բարձունքներից մի ժամ ցած, Յամուրի դեպի արեւմուտքում էր դանվում, նախկինում դուրս հայաբնակ, Սինչան դուրսը։ Բոնի մահմեդականացման ասորիներին դուրսից հեռացող հայերի աները դրավել էին թուրքերը։ Գեպի արեւմուտյան կողմում Սինչանի հաջորդում էին Սիմոնա (Սիմոնի), Կիւճի դուրսերը։ Յամուրի դեպի արեւելյան ափին էր դանվում Իշխանի (Իշխանաց) մեծ դուրսը։ Սլս դուրսում 1900—1910 թթ., սկանասանների վկայութիւնը, դուրսի բնակիչները, շուրջ 200 տուն, ամրորդութիւնը Դուսալֆօօղլու օրով մահմեդականացած հայեր են եղել, մեծ մասամբ պահպանած աղալին բարբերն ու

սովորութիւնները։ Այն տանը, որանը ընդհանրապես հլուր էին ընդունում, նույնիսկ ցահել կանայք հայ տղասարդկանց մոտ երեսները չէին ծածկում։ Տան հարսը լուռ ու մունջ ձեռքերին շուր էր լցնում, ոաները վանում։ Սեղանը սպասարկում էին կանայք։ Շաա դուրսը պահպանել էին իրենց հին հայկական անունները («Խաչի օղը», «Մաղլուտ», «Եմփոտ», «Ելաշուտ» և ալն)։ Գլուղում անացել էին ավերակ ուխաավարներ, ուր հասակավոր սարդիկ դնում էին ուխտի Շատ դերդաստաններ կուլում էին իրենց հայկական ավանդական աղանուններով՝ Քիթթօրցի, Սվետօր, Մարգարցի և ալն։

Աղբիւր Յամուրի դեպի թագի արեւմտյան կողմում դանվող ամենահետադարձ հայաբնակ դուրսն էր, որի բնակիչները նույնպես բոնի ուժով մահմեդական էին դարձել։ Աղբիւրցի մեծ ժամ վերե հունական Սանդա գլուղալսի աները արդեն դեպիսար ու հարթ հողածածկ կտուրներ ունեին։

Սինչան դուրսից դեպի հլուսիս իրար հաջորդում էին Վեիւն-Միսլսուր և Աբրիլ դուրսերը։ Բոնի մահմեդականացման տարիներին բնակչութիւն մոտավորապես կեսը իսլամ էր. նրանց բնակավայրերը դավթել էին թուրքերը։ Մնացորդները լիովին թրքախոս էին դարձել։ Աբրիլի Աղբիւրի շրջանի հլուսիսային կողմի վերջին հայաբնակ դուրսն էր, որը դեպի ներքին՝ Սլուրմենի բնակավայրերից բաժանված էր լայնածավալ անաստներով (շուրջ երկու ժամվա ճանապարհ)։ Դրան հակառակ, հիշալ դուրսը սահմանակից են Յոմուրայի վիճակի հարավային՝ Ֆիրինժուա, Կալաֆկա, Պաճուլախ, Աղլիոն և ալլ դուրսերին ու սերս կաղված էին նրանց հետ։ Ալլ դուրսից Տրապիզոն քաղաքը դնալու ճանապարհն անցնում էր Կալաֆկա դեպի ընթացքով։

Կաաաուաա դուրսը դանվում է Կալաֆկա դեպի արեւելյան ափի ծովափնյա մասում, Տրապիզոնից 2,5 ժամ հեռավորութիւն վրա։ 1700-ական թվականներին դուրսի բնակչութիւն մեծ մասը հայեր են եղել։ Սեղեթի սարսափելի օրերին մի մասը բոնի իսլամացվում է, մի մասն էլ հեռանում է ուրիշ վայրեր։ 1895 թ. կաողածների օրերին Կաաարուբսալում ապրում էր 11 հայ բնասնիք. Գալուսայանների նահապետական բնասանիքը 25 հոգի, 5 աուն Վարդեանցի, 2 աուն Օվալցի, որոնք հայանի թաղիբագործներ (ֆեւիշի) էին, ե 3 աուն Աոաքելցի։

1895 թ. կողածին, շնորհիվ մեծահամրավ Վարդեանցի Մարգի («Ջուոնալի Մարդիս») խղղալսութիւն, դուրսը թալանի չի ենթարկվում։ Բոուր բնասնիքները դիւված հեռանում են անասո, դուրսի բարձունքներում դիրք բոնում ու լուր ուղղակում թուրք թաղապետին. «Մեկ սղանված

Հայն փոխարեն 10 թուրք կապանվի, մեկ թալանած կամ վառած տան փոխարեն, հինգը կհատուցվի»։ Համաձայն տեղացիների հավասարակալութունների, հայերին պաշապան են կանգնել Սարգսի մասերիմ ու հեգինակավոր թուրք ընկերները և այդպիսով գյուղը փրկվել է կողոպուտից ու մարդկային զոհեր աալուց։ Հետագայում, շրջապատված լինելով թուրք ընկերներով և տեղում մնալը անխոհեմութուն համարելով, ջաաերը թողնում հեռանում են՝ որը Ռուսաստան, որը մոաակա հայկական գյուղերը։

Ֆիրինժուտ հայկական գյուղը գանվում է Կալաֆկա գետի արեելյան թեք լանջերին, Տրոնայի ծովափից 3 ժամ հեռավորության վրա։ Սրահաաաանապարհն անցնում էր Կալաֆկա գետի արեալայան կողմից՝ Կալաֆկա, Միսոխոր, Խոմա թուրքական գյուղերի միջից։ Ֆիրինժուտը զուտ հայկական գյուղ էր, 27 աուն ընակչութամր, որոնցից 3-ը՝ Խղարճի, 3-ը՝ Քյոսեցի, 6-ը՝ Օվակիմցի, 6-ը՝ Քոչիկցի, 5-ը՝ Թուղաբցի, 3-ը՝ Օբսուղցի ու 1-ը՝ Չեփնցի աղգատոհմերից էին։ Բուլորն ունեին սեփական հողամաս։ Բնակիչների գլխավոր զրաղմունքը կաղինի մշակումն էր, որի բերքը համարյա ամբողջովին վաճառում էին։ Գյուղաանաասական մյուս ճյուղերը՝ գաշտամշակութուն, ըանջարարութուն, հավարութուն, մեղվարութուն, թեե անրաժան ու կաբոր մասն էին կազմում ամբողջ անասության, սակայն դրանցից ստացած բերքն ու բարիքը հիմնականում ծախսվում էր սեփական կարիքների համար։

Հողի պակասութունը, չխոսելով ֆիզիկական անապահովության մասին, շատերին սափում էր պանդխտության գիմել, իսկ ոմանք էլ անաաոներում կոյժելի (փայաածուխ) էին պաարասաում ու շուրջ 6—7 ժամվա ճանապարհ ածուխի ջվալները շալակած, աանում էին քաղաք (Տրապիղոն) ու ընչին արժեքով ծախում, աան անհաաադելի կարիքները հոգում։

Բացի տնային ու գաշաային սղխատանքից, բուր կանայք անխտիր զրաղվում էին ջուհակութամր։ Իրենց ձեռքով մանած թելերով (կանեփ, բուրդ) ու գործած լաթերով նրանք հոգում էին ընտանիքի անհրաժեշա հագուսանդներ։

Ֆիրինժուտից օգավում էին հարեան՝ Ապիոն գյուղի դպրոցից ու եկեղեցուց։

1895 թ. թալան-կոտորածի օրերին, շնորհիվ Ուղ գյուղի հեղինակավոր թուրք կալվածաաեր Մուրադիան օղլի Օսման բեկի մեծահոգության, ֆիրինժուտից զոհեր չունեցան ու մեծ կողոպուաի չենթարկվեցին։ Սինջան գյուղի հրոսակներին հաողվեց թալանել ու հրկիզել միայն մեկ աուն։ Այնուամենայնիվ, արգեն հաջորդ աարի-

ներին այդ գյուղից էլ սկսվում է զանգվածային պաղթը գետի Ռուսաստան՝ Սուխում, Սուչի և ալլուր։

Բաճուլաղ։ Ֆիրինժուտին սահմանակից այս գյուղում եղեռնի նախօրյակին ընակվում էր 30 աուն թուրք ու միայն երկու աուն հայ, որոնք հողաղուրկ մարաբանեը էին։ Մինչև 1895 թ. այնաեղ ապրում էր շուրջ 15 աուն հայ, Թալան-կոաորածից հետո բուրն էլ փախչում են Ռուսասաան և ալլուր։

Սիֆթեր։ Կալաֆկա գետի արեմայան կողմում գանվող ամենահեռավոր հայկական գյուղն էր, Տրապիղոնից՝ 8, ծովափից (Տրոնայից)՝ 5,5 ժամ հեռավորության վրա։ Տրապիղոնից Սիֆթեր գնալու ճամփան մինչև Տրոնա անցնում էր Բաթումի խճուղով, այնտեղից մինչև Սիֆթեր արահետն անցնում էր Կալաֆկա—Միսոխոր—Սամբրա—Ապիոն—Դողարակ գյուղերի միջով։ Սիֆթեր գյուղի ընակչության մեծամասնութունը (150 աուն) թուրքեր էին, հայերն ապրում էին երկու թաղում (մահալա)՝ Սիմավոնցոց և Պոյուկցոց, ընդամենը 26 աուն։ Հայերը թեե մեծ մասամր սակավահող, սակայն սեփական անտեսության տեր էին, քարաշեն աներով։ Հայկական երկու թաղերն էլ ապահովված էին սաոն ու զուլալ աղբյուրներով։ Բնակչության հիմնական պրապմունքը նույնն էր, ինչ վերոհիշյալ Ֆիրինժուտ գյուղում։

Սիֆթերից սեփական եկեղեցի չունեին, հաաախում էին Ապիոն գյուղի եկեղեցին։ Քարաշեն, քառամյա գպրոցը, հիմնված 1880-ական թվականներին, գտնվում էր Սիմավոնցոց թաղում։ Պուլուբցոց թագից գպրոց գնալու ճանապարհը թուրքական թաղի միջով անցնելու պատճառով, աղջիկ երեխաները գպրոց չէին հաճախում։

1895 թ. թալան-կոտորածին սիֆթերցիներին, ինչպես նաև մոաակա ուրիշ հայկական գյուղերին, պաշապան է կանգնում վերոհիշյալ Մուրադիան-օղլի Օսման բեկը։ Մինչև կոտորածը գագարեցնելու մասին պաշաոնական հրահանգ սաաաալը, իր ապարանքում նա պատասալրում էր հաբևան շաա հայերի։

Չեփնցոց-գեղ։ Սիֆթերից գետի ծովափ, Դոպարակ թուրքական գյուղին հաջորդում էր հայաբնակ այս զյուղը, ջուրջ 25 աուն ընակչութամր, մեծամասնութունը՝ 17 աունը Չեփնցոց աղգատոհմից։ Բացի նրանցից, այստեղ ապրում էին Գարագյուղցիք, Պուլուբցիք և Մալխասցիք։ Չեփնցոց-գեղն անցյալում Ապիոն գյուղի մի թաղն է եղել։ Տարիների ընթացքում այս թաղի աներն ավելացել ու նոր գյուղի է վերածվել։

Այս գյուղի հայերն էլ, թեե սակավահող, սակայն սեփական հողամասեր ունեին, մեծամասնութունը քարակերա աներում էր ապրում ու

հիմնավոր տնտեսության տեր էր: Հողամասերը հիմնականում զարավանդային էին:

1895 թ. ծիկանուցի թուրք հորդաններին հաջողվում է թալանել ու վառել այս դուռի որոշ տներ միայն: Ենթերիվ հիշյալ Օսման բեկի, գլուղըն բնիկներին թալանի չի ենթարկվում ու դուհեր չեն լինում: 1915 թ. եղեռնին բռնադատվող ենթարկվածներից 6 հոգի (3 կին, 3 տղա) փրկվում են Տերախի բրգերի շնորհիվ:

Ապիոն (Աբյան) դուռ հայկական դուռը գտնվում է Կալաֆկա գետի միջին հոսանքի արեմոտքում, Պոնտակոն լեռնաշղթայի գետի Սև ծովը ձգված մի րապուկի՝ Ուզտադի լեռան, ձորերով կտրամած, հարթավայրերից բոլորովին պարկ, թեթև լանջերին: Դառնվում է Տրապիզոնից 7, իսկ ծովափից 3 ժամ հեռավորության վրա: Կարճ ճանապարհով նույն է, ինչ Սիֆթեր դուռը գտնվում է Կալաֆկա գետից կողմում վեր է խալացած Սրնջուրի ավազանում: Ակտնատններից մեկի արտահանությանը, ապիոնցիների տները հնացած ու անշուր փեթակների մոտ, իրարից 500—1000 մետր հեռու, տարածված էին այդ անհարթ ու բնակության համար անհարմար լեռնալանջերում: Չնային բացառությանը այդպես էն անկողնաված նաև Ապիոնի շրջակա՝ Ստմերա, Ֆիրինձուր, Դեֆնցոց դուռերի տները: Ապիոնում ապրում էին խաչատուրցիք՝ 6 տուն, Դահրիմոնցիք՝ 5, Մալխասցիք՝ 7, Խուլաբցիք՝ 6, Պոլիսցիք՝ 3, Զրաբցիք՝ 3 և մեկական տուն Օվակցի ու Տերտերցի աղագետներից, ընդամենը՝ 31 տուն, 250 շունչ բնակչությամբ:

Ապիոնցիք, ինչպես նաև Կալաֆկա գետի հովտում հիմնված հիշյալ գյուղերի հայ բնակիչները, սովորաբար չափավոր ձամշենից ու Սև-գետից փախած համշենահայեր էին՝ իրենց մայրենի բարբառով ու նահապետական-կենցաղային սովորություններով: Այս դուռախումբը եղել է առաջին ու ամենամոտավոր հանգրվաններից մեկը Սև-գետից ճաղուղիով հայերի համար:

1900-ական թվականներին Ապիոնում մարտի հայեր չկային, բոլորն էլ ունեին սեփական հողամասեր ու մեծ մասամբ քաղաքներ տներ: Բնական աճի հետևանքով, այս դուռի մեծամասնությունը նույնպես սակավահող էր դարձել, որի պատճառով անկախ սպառնացող ֆիդիկական վուանդից, շատ աղամարդիկ, ընտանիքները թողնելով հայրենի դուռում, ստիպված էին պանդերխություն գիմել: 1860-ական թվակներ, Ռուսաստան դաղթած արախին համշենահայերի թվում եղել է ապիոնցի մի քանի ընտանիք, որոնք ծովափ են դուրս եկել Նովոռոսիսկի ու Տուապսկի միջև գտնվող Թինկինկա (Շափսուղա) կոչվող վայրում:

Ապիոնցիների գլխավոր զբաղմունքն էր կաշու աշգիներն էին: Կաշուտներում ու տնամերձ հողերում անպակաս էին պտղատու ծառերը՝ տանձ, խնձոր, սալոր և յուրաքանչյուր ասան շուրջն անպայան՝ ծվաղի մշտադալոր ծառերը:

Այստեղ էլ գլխավոր հացահատիկը լազուտն էր: Սննդամթերքների թվում անպակաս էր լոբկի (լոբի), սիվ բոնօաբը (տերեակավոր սև բանջար), լոնթակն ու փոխիմզը: Ապիոնցի գեղջկուհիները համուտ ջուլահներ էին:

Ապիոնը շրջակա՝ Սամերա, Ֆիրինձուր, Չեֆնցոց-գեղ հայկական դուռերի մշակութային կենտրոնն էր: Այստեղ էին գտնվում այդ դուռերի դպրոցն ու եկեղեցին: Գյուղի ս. Լուսավորիչ Եկեղեցին, հիմնված 1850 թ. Տրապիզոնի մոտակայքում, եզակի էր իր կամարով, որի մեջ բնականաբան վալչե (փարշ, կճուճ) էին թաղված՝ արձագանքը ուժեղացնելու համար: Ըստ ավանդության, այդ քարակերտ եկեղեցին կառուցվել էր հիշյալ գյուղերի համատեղ սեփերով: Եկեղեցու ներսում կտանաց համար կառուցվել էր ընդարձակ բարձր պատշգամբ-դահլիճ:

Ապիոնի բարձունքում, ըրակի վրա, կար ավերակ մի ուխտավայր, ուր հավատացյալները գնում էին ուխտի, ծվեններ կապկապում ծառերի ճյուղերին, մատուղ կտրում (ղոհարություն կատարում):

Բացի հայերենից, ուսումնարանում դասավանդում էին թուրքերեն ու ֆրանսերեն լեզուներ: 1895 թ. չարդ-թուլանի օրերին, ապիոնցիք ևս փորձանքից ու կողոպուտից փրկվեցին շնորհիվ նույն Մուրադխան-օղլի Օսման բեկի շրջահայացության ու հեռախոսության:

Դժվար է հավասար, սր Օսման բեկը ալպիսի կառույց միջոցների գիմած լինի ղուտ մարդասիրական զգացմունքներով առաջնորդվելով, քանի որ քան ասարի հետ, հայ ժողովրդի անխախտ շարժումը արժանիքի օրերին, 1915-ին, նա դարձավ հայ ժողովրդի ամենարարարու պահանջներից մեկը:

Ինչ վերաբերում է 1895 թ. նրա ժվենանքն վարձունքին, ակնառաններն այն բացատրում են հետևյալ կերպ: Այդ սարափակի օրերին Շանայի Շաարդաղն բեկերն իրենց առաջնորդ Միթթաղ բեկի գլխավորությամբ գիմված ուժերով պաշտպան են կանգնում շրջակա հայ դուռերին: Միթթաղ բեկը միաժամանակ սուրահաղ է ուղարկում Ուղի՝ իր բարեկամ Օսման բեկի մոտ, որպեսզի նա պաշտպան կանգնի ու թույլ չտա իր հովանու տակ գտնվող հայ բնակչության ու դուռերին որևէ աղետի ենթարկվել, սպառնալով, որ հակառակ տարադատում կդառնան ռուսերի թշնամիներ ու հայերի փոխարեն ինքը միթթաղ կլինի: Վալչեի պաշտպանելու երկրորդ շարժառիթը, համաձայն վերապրած տեղացիների վկայությունների, եղել է Ապիոնի երիտասարդության կտրուկ ահաբեկն ու խղիճությունը: Գյուղի քաղաքի երիտասարդների մի խումբ (Սաֆիան Կոչիկյան, Օվան Չեֆնյան, Բորոս-Հայկ և Թալաթ-Արշակ և այլք) նամակ են գրում Օսման բեկին, ինքրելով պաշտպան կանգնել հարևան հայերին, որի համար ցմա՝ Երախտապարա կլինեն, իսկ եթե այդ քալին

1915 թ. եղեռնին ընդհանրապես ենթարկվածներին 19 հոգի (կանայք ու երեխաներ) փրկվել են Դերսիմի քրդական գյուղերում:

Սամեռան Ապիոն գյուղի շարունակություն էր, որի կենտրոնից մինչև Ապիոնի եկեղեցին մի ժամվա ճանապարհ էր: Գյուղի դիրքը, ընակչության գրադմունքը ոչնչով չէին ասորերվում հարևան Ապիոն, Ֆիրինժուտ գյուղերից: Այս ղուտ հայաբնակ գյուղն ուներ 32 առու, 224 անձ բնակչությամբ: Աղգային ներքին կյանքով (դպրոց, եկեղեցի և այլն) Սամերան Ապիոն գյուղի անրաժան մասն էր: 1895 թ. վերահիշյալ հանդամանքների շնորհիվ, այս գյուղն էլ աղավաղվում է կողոպուտից ու ղոհեր ապուց: 1915 թ. եղեռնից մազապուրծ 15 հոգուց 7-ը փրկվեցին շնորհիվ Դերսիմի քրդերի:

Թուրքերը Քենեսուր (կեղծ հավաադարձ) էին անվանում այն քրիստոնյաներին, որոնք իսլամը պաշտոնապես, առերես ընդունելուց հետո, դարձյալ հավատարիմ էին մնում իրենց նախկին հավատին: Այդպիսիք համարվում էին Մուհամմեդի գավաճաններ և օրենքով դատապարտվում էին մահապատժի:

Համշենհայություն և, առհասարակ, պոնտահայության արյունոտ դեպքերի ժամանակ, մահվան սպառնալիքի առկա առերես իսլամի կրոնն ընդունած հայերի մի մասը, որոշելով աղաաղավանել իրենց հայրենի հավաաը, թողնում էին իրենց գյուղերն ու հասաաավում այլ բնակավայրերում՝ խուսափելով հաաապնդումից ու դաժան դատաստանից:

Թենեսուր հայեր էին Ապիոնի, Սամերայի և այլ գյուղերի շատ հայ դերդասաաններ:

Միսոխոռ³: Գտնվում է Սամերայի հյուսիսային կողմում, նույն՝ Ուղաաղի սարի արեելյան մասում, Տրապիղոնից՝ 5, Տրոնայից՝ 2,5 ժամ հեռավորության վրա: Միսոխոռում կանգուն էր մնացել Պոնաական կայսրության օրերից մնացած, կիրուբար կառուցվածքով, ամրակուռ հունական մի եկեղեցի: Համշենից ու Սե-դետից այս վայրերը դաղթած հայերը այդ շենքը դարձնում են իրենց աղոթավայր: Երկար ասրիներ Միսոխորի եկեղեցին միակն էր շրջակա հայ գյուղերում (Կալաֆկա, Սամերա, Ապիոն, Սիֆթեր և այլն): Ապիոնում եկեղեցի կառուցելուց հետո, Միսոխորի եկեղեցին մնում է Կալաֆկա և Միսոխոր

չդիմի, իրենք չեն կարող երաշխավորել նրա անձի անձեռնմխելիությունը: Այսպես թե այնպես, շնորհիվ Օսման ընկի բանքերի, 1895-ին Ապիոնի գյուղախմբի հայերը փրկվեցին զանգվածային թալանից, հրկիզում-ավերածությունից ու ղոհեր տալուց:

³ Այս գյուղը չպետք է շփոթել Ցամպուլի դետի միջին հոսանքում պանվոդ նույնանուն բնակավայրի հետ:

գյուղերի հայ համայնքին: Պաշտոնական արձանագրություններում՝ այդ կառույցը հիշվում է որպես Կալաֆկա գյուղի երեք եկեղեցիներից մեկը՝ ս. Գևորգ անունով, հիմնված 1820 թ.:

Միսոխորը Համշենից դաղթած հայություն առաջին հանգրվաններից մեկն է: Սե-դետի արյունալի օրերին Ղուռուֆ-օղլու ղոհը դարձավ նաև այստեղ հաստատված հայերի ղգալի մասը: 1895 թ. կոտորածից հետո աղգային ոգին պահպանածների մեծամասնությունը հեռացավ ուրիշ հայաշաա վայրեր կամ Ռուսաստան:

Տրեման գտնվում է Կալաֆկա գետի ծովափնյա մասի արևմայան կողմում, դեպի Բաթում տանող խճուղու վրա, Տրապիգոնից 2,5 ժամ արեվելք: Տրոնան Յոմուրայի վիճակի վարչական կենարոնն էր՝ միգյուրանիսա ավանը: Այստեղ կային փոքր շուկա, սրճարան, պանդոկ, գարնոց, պաշտառ, հացի փուռ, խանութներ, կաղինի ընդունման կետ և այլն: Տրոնայում ապրում էին թուրքեր՝ 40, հույներ՝ 20, հայեր՝ 13 տուն, որոնցից 5 առունը Լուսիկցիք, 2-ը՝ Զուլաքցիք, 3-ը՝ էքշցիք, 2-ը՝ Իսըայելցիք և 1-ը՝ Յոմուքցի, շուրջ 90 անձ: Գյուղն ուներ քառամյա հայկական դպրոց, հիմնված 1880-ական թվականներին:

Եղեռնից փրկված վեց հոգուց երեք պտտանու փրկել-պահել էին թուրքերը, իսկ երեքը ագատվել էին ինքնապաշտպանություն դիմած իւրմբերում:

Տրոնայով վերջանում է Կալաֆկա դետի հովտում գտնվող հայկական գյուղերի ցանկը:

Կալաֆկա լեռան արեմոտյան լանջերին՝ Տրոնային հաջորդում է Կոխալի գյուղը, Տրապիղոնից 3 ժամվա ճանապարհ, որտեղ ապրում էր 30 առուն թուրք և 10 առուն հայ բնակչություն՝ Լուսիկցի, Ալաքցի, Սաղրցի և այլ աղգաառհմերից: Կոխալի հայերը աղգային ներքին կյանքով ամրոգջովին կապված էին Քյան գյուղի հետ, որոնց հետ համատեղ ունեին դպրոց ու եկեղեցի:

Քյան: Քյան գյուղը դրեթե շարունակություն էր Կոխալի գյուղի և գտնվում էր Կալաֆկա լեռան հյուսիսարևմայան լանջերին: Տները դասավորված էին լեռան բարձունքներից մինչև Շանա գետը՝ Տրապիղոնից 3,5 ժամ հեռավորության վրա: Գյուղի 25 առուն հայերից 22-ը Երեմցի, 2-ը Տեմերչի և մեկը Սաղրցի աղգաառհմերից էին:

Գյուղի քարաշեն դպրոցը կառուցվել է 1888 թ.: Դպրոցը համայնական ուժերով կառուցել էին Կոխալի և Քյան գյուղերի բնակիչները:

1870-ական թվականներին Քյան, Կոխալի և

³ «Էշմիածին» ամսագիր, 1966, № 6:

Կալաֆկա դուղերի հայ բնակչությունը միացյալ ուժերով Քիրեղյուզ (Կեռասնոց) կոչվող լեռան գոգոթին, հինավուրց մատուռի տեղում, կառուցում է քարակերտ փառավոր սի եկեղեցի, Համաձայն ուղղափառական տվյալների, ս. Փիլիպոս կոչված այս եկեղեցին հիմնվել է 1656-ին, ըստ երեմիայի, մատուռի հինավուրց անվամբ Գյուղի անուանոթածի մի բլրակի վրա կար ավերակ մի ուխտավար, ուր հավատացյալները ուխտի էին գնում, սոմ վառում, մատաղ անում, ծառերի ճյուղերին հուղուստի կտորներ, տրեխ (շաբուլ) կախում:

Քյան դուղի Շալվալի (Կարապետ) վարժապետ Երեմյանը 1900-ական թվականներին ամառը շրջանում միակ ուսուցիչն էր, որը հատկապես հանդիսավոր օրերին հազնում էր համշնցիների աղյուսին աուրալը՝ երկար, դեանին քսվող փաթկում անդամավորիք (շավար), վրայից ըստիտակ, բրդե երկար դոսի, սրունքներին՝ քուզլալ, վրայից՝ լիշուղ և կալալ, ղլխին՝ սպիտակ կալալալ (բաշլուղ):

Կալաֆկա (հայկական): Այս դուղը գտնվում է Քյանից հարավ, Կալաֆկա լեռան հարավարևմտյան լանջերին:

Տրամիգոնից Կալաֆկա 5 ժամվա ճանապարհ է: Գյուղի 63 առև հայերից 18-ը Ղուկասյի, 11-ը՝ Ջևրմակցի, 3-ը՝ Պողոսյի, 16-ը՝ Նրեմյի, 2-ը՝ Սուրբուրի, 4-ը՝ Արուստյանի, 4-ը՝ Քջի և 4-ը՝ Դեմիրճյանի աղապարհներից էին: Հեռաբերական էին նաև սրանց աղապարհներին կցված փութ-անոնները: Այսպես, Ջևրմակյան Կարապետին անվանում էին «Շոթափ» նամ «Ջոթափ»՝ յոռ թափող, չափազանց աշխատասեր ու ժլատ, առավոտ վաղ դեռ ցողը շթափված աշխատանքի շարսյող, «Կանսուղիք»՝ արյուն չսիրողներ, սխերիմ թշնամիներին առանց արյունահեղության հաշակեցողներ և այլն:

Կալաֆկայում դուղություն ունեին հետեյալ թաղերը. էքջոց՝ գյուղի ամենահեռավոր ծայրամասը, Ղուկասցոց՝ դուղի կենտրոնական մասում (Տանձուտ):

Ինչպես Կալաֆկայի, այնպես էլ վերոհիշյալ Կոխալի, Քյան, Տրեմա դուղերի հայերի մեծամասնությունը XIX դ. վերջերին սեփական հողադասեր ունեին, որը նրանց իրավունք ու հնարավորություն էր տվել քարաշեն, հիմնավոր տներ կառուցելու և սեփական անտեսություն հիմնելու: Բնակչության հիմնական ու եկամտաբեր զբաղմունքը կաղնուտների մշակումն էր, որոնց եղբորին և իրարից զգալի հեռավորությամբ աճեցնում էին նաև պողատու ծառեր (տանձ, խնձոր, սալոր և այլն): Տնամերձ հողերում ունեին թղենի, ծվա-

ղենի և խաղողի որթեր, որոնք ազատ թողնում էին ծառերն ի վեր: Յուրաքանչյուր ընտանիք սեփական կարիքները բավարարելու համար զբաղվում էր նաև դաշտամշակությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ, կաթնատնտեսությամբ: Հավաքությունը թեև առաջին հայացքից աննշան, սակայն չափազանց էական և օգտակար զբաղմունք էր: Ամեն ընտանիքի 3—10 փեթակ ունենալը համարվում էր պարտադիր ու անհրաժեշտ: Կանայք հմուտ ջուհիներ և ձեռագործ անողներ էին:

Բացի երկրագործությունից, Կալաֆկայում զբաղվում էին նաև կղմինդրագործությամբ: Ղուկասյան եղբայրների կղմինդրի արհեստանոցի համբավը տարածվել էր գյուղի սահմաններից շատ հեռու: Հայտնի էր նաև կալաֆկացիների պասաբաստած կոյճեյի (փալտածուխը), որը բաղաբույս վաճառվում էր ամենաբարձր ղեկերով: Դուկասցիք միաժամանակ հմուտ դարբին-ղինագործներ էին: Նրանց հետնորդներն այժմ ապրում են Անապայի շրջանի Հայկաձոր դուղում:

Կալաֆկացիներն սկզբնապես օգտվում էին Միսոխորի հինավուրց քարակերտ հունական եկեղեցուց: 1880-ական թվականներին Քիրեղյուզ սարի գագաթին համայնական ուժերով նոր եկեղեցի կառուցեցին¹⁰, Հին դերեղմանոցի մոտ (Տանձուտ թաղում) կար նաև փոքր մատուռ, որն, ըստ բանավոր վկայության, հիմնել են սեղեծացիները:

Կալաֆկայում ուսումնարան դուղություն է ունեցել 1850-ական թվականներից: Մինչև 1891թ. դասավանդումը կատարվել է հին մեթոդներով՝ առաջնություն տրվելով կրոնական առարկաներին: Դուղությունը հիմնովին փոխվում է հայտնի հասարակական դործիչ ու փորձառու մանկավարժ Մկրտիչ Գարադաշյանի՝ 1894 թ. այս դուղը ուսուցչի պաշտոնով պալու օրից: Նրան հաջողվում է կարճ ժամանակամիջոցում շուրջը համախմբել գյուղի առաջադեմ երիտասարդներին: Նա դասավանդում էր քաղաքի գաղոցի ծրագրի մանկավարժական վերջին պահանջների համաձայն: Աղջիկները տղաներին հավասար սկսում են զարգացնել, Հասակավորների համար րաց է անում

¹⁰ Ըստ «Էջմիածին» ամսագրում (1966, № 6) հրատարակված ավանդների, Կալաֆկա դուղում 3 եկեղեցի է եղել: Համայնական է գրանցից մեկը Միսոխորի եկեղեցին է, քանի որ Միսոխոր դուղը եկեղեցիների ցուցակում բացակայում էր: Հիշելու է, իսկ երկուսն այն մատուռներն են, որոնցից մեկը՝ Քյան, երկրորդը՝ Կալաֆկա դուղում էր գտնվում: Հիշելու է ամսագրում այդ եկեղեցիների անվանված են ս. Կոստանի (Քյանի մատուռը, հիմնված 1825-ին), ս. Գևորգ՝ հիմնված 1820 թ. (հավանաբար, Միսոխորի եկեղեցին) և ս. Փիլիպոս՝ հիմնված 1650-ին (Քյանի մատուռը), ս. Պողոսը՝ հիմնված է 1825 թ. (Քիրեղյուզի եկեղեցին):

գրագիտության երեկոյան գասրնթացներ, կաղ-
մակերպում գինավարժության ուսուցում: Դժրախ-
տաբար նրան չի հաջողվում մինչև վերջ նվիրվել
իր սիրած գործին: 1895 թ. կոտորածին նա ղոհ-
վում է քաղաքում՝ զենքը ձեռքին ջարդարարների
զեմ պայթարելիս: Նրան հաջորդարար փոխարի-
նում են վերոհիշյալ Կարապետ Շալվարլին՝ Քյան
գյուղից, տրապիզոնցի էդվարդ Հրսայանը, հա-
մագյուղացի Պողոս Պողոսյանը (վերջին երկուսը
Տրապիզոնի Աղզալին վարժարանի շրջանավարտ-
ներ), վանեցի երիտասարդ ուսուցիչ Աուրեն Պար-
թեյանը և տրապիզոնցի Վահե Ճգնավորյանը, որը
ինքնապաշտպանական խմբերի հետ սար ըարձ-
րանալով սպանվից փրկվեց:



4. Բանասաց Վարդան Պետրոսի Ղուկասյան (Կալաֆկա
գյուղից):

1895 թ. կոտորածի օրերին, շնորհիվ Շանա-
յի Շատրրղազե թուրք ռեկերի ղինված ուժերով
հայերի պաշտպան կանգնելուն, ինչպես Շանա,
այնպես էլ Կալաֆկա գյուղերը ղանգվածային
թալանի ու ավերածության շենթարկվեցին: Կա-
լաֆկացիք ընտանիքներով լեռները ըարձրանա-
լով, ղինված ուժերով հսկում էին գյուղը: Կալա-
բաբա և Արսեն թրքական գյուղերի հրոսակնե-
րը ճավգար-Ալիի գլխավորությամբ մտնում են
Կալաֆկայի Տանձուտ թաղը, 2—3 աուն հրկիղում
ու սկսում են թալանը: Դյուղում մնացած պահա-
պանները կրակում են թալանիչների վրա, որոնք
խուճապի մատնված հեռանում են: Իմանալով

կառարվածի մասին, Միքթաթ ռեկն իր երիտա-
սարդ որդուն՝ Շեֆթթ ռեկին ուղարկում է ճավ-
ղար-Ալիի մոտ, ղգուշացնելով, որ՝ «Ով համար-
ձակվի իր շրջանի հայ գյուղերին մոտենալ, ոգջ
չի վերաղանա»:

1915 թ. կալաֆկացի աասը երիտասարդից
բաղկացած մի խումբ Հովհաննես (Կրակ-Նանես)
Ղուկասյանի գլխավորությամբ, շենթարկվելով
բռնագագթի մասին Տրապիզոնից արված կլտ-
րուկ պահանջին, ղենքը ձեռքին ըարձրանում է
սար, փայլուն էջեր ղրելով յոմուրացիների գոյա-
մարանրում: Նրանց հետ էր նաև գյուղի ուսուցիչ
Վահե Ճգնավորյանը: Այդ խմբին են միանում
Սրրղանալիի սպանգից փախած երկու կին ու մեկ
աղամարդ: Բռնագագթից վերագարձած վեց հո-
պին փրկվել էին քրղերի շնորհիվ:

Շանայի գյուղախումբ: Յոմուրայի վիճակում
ապրող հայության ինչպես աշխարհագրական,
նույնպես և սոգգային կյանքի կենարոնը Շանայի
գյուղախումբն էր՝ Կյուշանա, Մինկիլա, Աարայլոր
ու նրանց սահմանակից Կալաֆկա, Ապիոն գյու-
ղերը, որոնց մեջ, շնորհիվ իր աշխտրնագրական
ղիրքի ու ղուտ հայարնակ լինելուն, առանձնահա-
աուկ տեղ էր ղրավում Կյուշանա գյուղը: Շանա,
Մինկիլա և Կյուշանա գյուղերը գտնվում էին Շա-
նա գետի ծովափնյա մասում՝ մինչև Կյուշանա
գետի աղունքները, Ուղտաղի լեռան ծովահայաց
թեի հարավարեելյան լանջերին: Կյուշտնա ու ձո-
շարա գետերի միջե, ծովափից շուրջ երկու ժամ
հեռու փոված է խիա անտառածածկ Արգուլայի
սարը, որը եղեոնի աարիններին հիշարժտն վայր
ղարձավ: Այս սարից սկիզբ առնող բաղմաթիվ
աղբյուրներն ու վաակները թափվում են վերո-
հիշյալ գետերը:

Տրապիզոնից Շանա ու Փոքր Սամարոբաա
(Աարայլար, Աֆյանձ) գյուղերը աանող ճանա-
պարհը ըաժտնվում է Գովաթայի կամուրջի արե-
մրտյան կողմից:

Շանա (Շաւա)¹¹: Գովաթայից ղեպի Շանա
գյուղը աանող ճամփան աւցնում է համանուն
գետի ընթացքով: Կամուրջից շուրջ կես ժամ հե-
ռու՝ Մաղարա-օղի (Քարայրի առջե) կոչվող վայ-

¹¹ Թեև Կյուշանա և Մինկիլա գյուղերը նախկինում եղել
են Շանայի թաղերը, սակայն նրանք մեծաղև և ինքնու-
րույն գյուղեր էին ղարձել: Այնուամենայնիվ, պաշտոնական
գրություններում շատ անգամ հիշվում են միայն Շանա ա-
նունով:

Հարկ է նշել նաև, որ խոփա քաղաքի մոտ ևս կա համ-
շենահայ Շոնա գյուղ: Հաղանական է. որ ինչպես այս երկու
գյուղերի, այնպես էլ Յոմուրայի վիճակի Կյուշանա գյուղերի
հեռավոր նախնիները գաղթել են Համշեն գավառի Կոշանա
գյուղից:

րում, դեպի ափին բարձրացած մի ժայռակտորի վրա, մինչև մեր օրերը (1915 թ.) ցցված մնացել էին երկաթյա սյուներն և օղակները։ Ավանդարար պատմում են, որ ժամանակին ծովը հասած է եղել այդ վայրերն ու վերոհիշյալ երկաթե ցից-օղակներին ամրացնում էին նավերը։ Այստեղ իրար են միանում Շանա դետի երկու ճյուղերը՝ Կյուշանա և Մեծ Սամարուքսա դետերը։ Մաղարա-օղից սկսում է բարձրանալ Բեկ-ատումի (Բեկի քայլ) կալոդղ, սրբառաջ քարերից կառուցված, շուրջ մեկ մետր լայնքով քարուղին¹², որը մոտ 2 կմ երկարություն ունի և հասնում է մինչև Մինկիլա գյուղի սահմանը։ Դեպի միացման անդից ըսկըսում են Շանա և, մասաուր, Սարալար գյուղերի՝ Յոմուրայի վիճակի ամենահարմարավետ ու տրդասարբեր հողամասերը։ Նսարդաղե բեկերի նախորդները այս գյուղերի լավություն հողամասերը թողնելով իրենց սերունդներին, հետագուր ու Կվույր մշտակիլի անտառածածկ հատվածները ծախել են իրենց նախկին հայ մարաբաներին։ Շանայում հայերը սակավաթիվ էին՝ ընդամենը 7 ընտանիք։ Շանայի երկու թաղում (մեծ ու փոքր), բացի հայերից, ապրում էին թուրքեր՝ 21 տուն, այդ թվում Շաաըրվաղե բեկերի առհմից 5 տուն, և 8 աուն հույներ։

Այս գյուղի սակավաթիվ հայկական համայնքը սարալարցիների հետ համաանդ ուներ փառավոր եկեղեցի ու օրինակելի դպրոց։

Սարալար¹³, Հսա երևույթին, այս գյուղում են իրենց առաջին սուլարանքները կառուցել շրջանի կալվածատեր սղաները, որտեղից և այն ըստացել է իր կոչումը¹⁴։

Տրալիդոնի մոտակա հայկական ամենահին շարժան գյուղերից մեկը Սարալարն էր, որն աչքի էր ընկնում նաև իր մշակութային կյանքով։ Այս գյուղում է սկսել իր հասարակական-մանկավարժական դործունեությունը անվանի բանասեր

¹² Սարալար գյուղի նախկին բնակիչ հարդանյան Արուստյան ճանապարհի շինարարության մասին պատմում է, որ ճանապարհը շինվել է իր պապի օրոք՝ 1850-ական թվականներին։ Շինարարությունը նախաձեռնել էր ժամանակի տնտեսահիշակավոր կալվածատեր Շատրդաղե Ահմեդ բեկը։ Նա կարդաղել էր չրջակա գյուղերի բոլոր բնակիչներին՝ թուրք, հույն, հայ, անխորի մասնակցել ճանապարհի շինարարությանը և, օրինակ ծառայելով, առաջին քարերը (մի քայլ) իր ձեռքով է անդաղել, այստեղից էլ ճանապարհն ստացել է այդ անունը։

¹³ Սարալարն ու նրա հարավարևմտյան մասում դանդող Աֆյանի գյուղը միասին կոչվում էին Փոքր Սամարուքսա։ Բեն Ստրալար գյուղը վարչական բաժանումով Փոքր Սամարուքսայի մի գյուղն էր, սակայն, իրականում այդ գյուղն այնքան սերտ էր կապված Շանայի հետ, որ համարվում էր նրա անբաժան մասը։

¹⁴ Թուրքերեն սարալ՝ աղարան, դղյակ բառից։

Ս. Հայկունին։ Իր արկածալի կյանքի մեծ մասը այս գյուղում է անցկացրել Ս. Հայկունու «Հուսնիցի Արքիոմ» դրքի իրական հերոսը՝ նաև Արքիոմը։ Ս. Հայկունին Սարալարի դպրոցում դասավանդել է շուրջ 8 տարի՝ 1864—1872 թ.։

Սարալարի (Փոքր Սամարուքսա) ու Բենդորոս եկեղեցին հիանվել է 1837-ին, որն սկզբում եղել է հինավուրց հունական փոքր մատուռ։ 1870-ական թվականներին, նույն վայրում, սարալարցիները հարևան՝ Սֆյունձ, Մինկիլա գյուղերի բնակչության մասնակցությամբ կառուցում են փառավոր քարաշեն եկեղեցի։ Շենքի կառուցման դործում ակտիվ մասնակցություն է ունեցել նաև գյուղի ուսուցիչ Ս. Հայկունին։

Սարալարցիների, ինչպես նաև շանացիների տնտեսության հիմքը կաղնուաններն էին, որոնք այստեղ առատ ու բարձրորակ ըկըք էին տալիս։ Կաղնուտների մեջ ու եղրերին նսւը շարքերով աճեցնում էին պտղատու ծառեր՝ տանձ, սալըր, խնձոր ու խաղող, տնամեքձ հողերում՝ թուղ, ծվաղ։ Չափաղանց հարպի էին Սարալարում և հարևան գյուղերում աճող քաղցրահամ Սինոպ ու Յոմուրա տեսակի խնձորները։

Բացառիկ երեույթ էր Հովսեփյան Սարգսի՝ արարների համառ փորձով սղնվացրած մալմուրգի (շաղանակ) տեսակը։ Անտառային վայրի շագանակից նա սաացել էր մշակվի տնային շագանակ, որի պտղի յուրաքանչյուր հատիկը անառալինի համեմատությամբ 4—5 անգամ մեծ և համեղ էր լինում։ Հովսեփյանների թաղում այդ ծառերի հատուկ պուրակներ էին աճեցրել։

Հացահատիկներից գլխավորը կիպտացորենն էր, որի հետ համաանդ մշակում էին նաև անհրաժեշտ բանջարեղներ՝ բանջար, լոբի, դդում, բոգկ, բաղուկ (ճակնդեղ) և այլն։

Անասնապահությամբ, հավաքուծությամբ ու մեղվարուծությամբ զրաղվում էին ընտանիքի սննդի կարիքը բավարարելու սահմանում։

Սարալարցիներն զրաղվում էին նաև շերամապահությամբ։ Նրանք մշակում ու բամբակախառն թելից թանկարժեք կաավեղեն էին գործում։

Մինկիլա գյուղը գտնվում է Արդսւլա սարի հարավարևելյան լանջերին, Կյուշանա դետի միջին հոսանքի արևմայան ափին Տրալիդոն քաղաքից երեք ժամ հեռավորության վրա։ Գյուղի կենաընական մասը, որտեղ կառուցվել էին ուսումնարանն ու եկեղեցին, հարմարավետ հողամասեր ուներ, մնացյալը, հատկապես հարավը՝ զեպի Կյուշանա, խիստ թեք ու խորխորատներով կտրված վայրեր էին։ Շանա գետից Մինկիլա ձղվում էր Բեկ-աաումի կոչվող ճանապարհը։ Համշենահայերն այս վայրերն են փախել XVIII դ.

սկզբներին՝ Սե-գետից, Տասնյակ աարիններ ընկերի հողերի վրա մարարաններ լինելուց հետո, դարձել էին սեփականատերեր:

